

Բացի այս համառոտագրէն, Ս. Ժողովը առանձին թուղթ մ'ալ գրեց յանուն Սաչատուր եպիսկոպոսին, որ թէեւ թուական չունի, բայց կ'երեւայ թէ գրուած է նոյն 1632, նոյեմբեր 22ին եւ ուղարկուած ի ձեռն Յովհ. Թադէոսի, Սպահանի եպիսկոպոսի: Սաչատուր Կեսարացի, Մովսէս կաթողիկոսի երիցագոյն աշակերտն էր եւ նշանակուած անկէ Զուղայի արքեպիսկոպոս. կ'ապրէր Սպահանի Բոկոտն Կարմեղեանց հետ բարեկամական յարաբերութեան մէջ եւ ոգեւորուած էր Միութեան գաղափարով. կը գրէր իր մասին Գրիգոր Կեսարացի իւր առ Մովսէս կաթողիկոս թղթին մէջ, թէ «ոմանք վկայեցին ստուգապէս, թէ առաջեալ է Սաչատուր նուիրակդ, թէ Ֆռանկաց երկու բնութիւն անբաժանելի ասելն եւ մեր մի բնութիւն ասելն՝ երկօքեանն ի մի տեսութիւն ունի»²¹: Այս լուրին ստուգութեան կը վկայէր նաեւ Հ. Դիմաս (տե՛ս էջ 336):

Ս. Ժողովին յանուն նորին Սրբութեան առ (Սաչատուր) Զուղայի Հայոց արքեպիսկոպոսն գրած քղթին պատմենք:

(Prop. Persia etc., an. 1648, vol. 209, f. 298.)

Զեր Տէրութեան համակը Հ. Յովհ. Թադէոս (P. Gio. Tadeo) մատուց Նորին Սրբութեան, որ մեծապէս ուրախացաւ, երբ վերահասու եղաւ անկէ եւ նոյն Հօր տուած գե-

²¹ Գալանոս, Միարանութիւն, Բ., 1, էջ 101: